ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# Գավառի պետական համալսարանում հեռակա բաժնի ուսանողների կողմից 2023-2024 ուստարվա դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցման արդյունքների վերլուծություն

ԳԱՎԱՌ 2024

Հարցման արդյունքների վերլուծությունը կատարվել է  ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից  2024թ. հոկտեմբերի 24-ին:

**Որակի ապահովման բաժնի վարիչ՝** Հայրապետյան Ք.,

**պատասխանատուներ՝** Նախրատյան Մ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


I. Հարցման ընդհանուր նկարագիրը ............................................................4

II. Հարցման մեթոդաբանությունը ..............................................................4

III. Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատում..............................................5

IV. Եզրակացություններ և առաջարկություններ ...............................................17

## I. Հարցման ընդհանուր նկարագիրը.

Դասավանդման որակից ուսանողների բավարարվածությունը գնահատելու, վերլուծություն իրականացնելու, ուսման որակը բարելավելու նպատակով Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) որակի ապահովման բաժնի կողմից հեռակա բաժնում սովորող ուսանողների շրջանում իրականացվել է հարցում նախապես մշակված առցանց (online) անանուն հարցաթերթիկի միջոցով:

Հարցման նպատակն է՝ բացահայտել առկա խնդիրները, ուսումնասիրել, վերլուծել, գնահատել ուսանողների կարծիքները, նկատառումները, առաջարկությունները, դժգոհությունները, դրանց հաշվառմամբ՝ ներկայացնել առաջարկություններ և ձեռնարկել միջոցներ՝ ուսումնական գործընթացի որակն ու արդյունավետությունը բարձրացնելու, հիմնական շահառուների բավարարվածության աճին նպաստելու համար:

## II. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցաթերթը բաղկացած է փակ, բաց և ինտերվալային հարցերից: Հարցաթերթի հարցերը մշակվել և կազմվել են որակի ապահովման բաժնի աշխատակիցների և ԳՊՀ դասախոսների, ուսանողների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցաթերթի նպատակն է որակական և քանակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը՝ միտված ԳՊՀ-ում կրթության որակի բարձրացմանը և ներքին շահակիցների բավարարվածության աճին:

## III. Գավառի պետական համալսարանում դասավանդման գործընթացից հեռակա բաժնում սովորող ուսանողների բավարարվածության գնահատում

ԳՊՀ 2023-2024 ուստարվա հեռակա բաժնի 2-րդ կիսամյակի քննաշրջանին մասնակցող 333 ուսանողներից հարցմանը մասնակցել են 169-ը, որը կազմում է գործող ուսանողների 50,7%-ը:

### 1. Ընդհանուր տեղեկություններ.

Հարցմանը մասնակցած ուսանողների թվաքանակն՝ ըստ ֆակուլտետների և մասնագիտությունների.

| Ֆակուլտետը, բաժինը | Ուսանողների ընդհանուր թիվը | Հարցմանը մասնակիցների թիվը | Հարցմանը մասնակիցների տոկոսային հարաբերությունը |
|---|---|---|---|
| **Հումանիտար մասնագիտությունների** | **164** | **89** | **54%** |
| Հայոց լեզու և գրականություն | 4 | 4 | 100% |
| Ռուսաց լեզու և գրականություն | 6 | 5 | 83,3% |
| Իրավագիտություն | 97 | 59 | 60% |
| Պատմություն | 14 | 5 | 35,7% |
| Տարրական մանկավարժություն և մեթոդիկա | 43 | 16 | 37% |
| **Բնագիտատնտեսագիտական** | **169** | **80** | **47,3%** |
| Բնապահպանություն և բնօգտագործում | 3 | 3 | 100% |
| Քարտեզագրություն և կադաստրային գործ | 6 | 2 | 33,3% |
| Սերվիս | 15 | 9 | 60% |
| Համակարգչային ճարտարագիտություն | 49 | 27 | 55% |
| Դեղագործական քիմիա | 3 | 3 | 100% |
| Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ | 93 | 36 | 38,7% |
| **Ընդամենը** | **333** | **169** | **50,7%** |

Գծապատկերից ակնհայտ է դառնում, որ հարցմանն առավել ակտիվ մասնակցել են Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հեռակա բաժնի ուսանողները:

Հաջորդիվ ընդհանուր մասնակիցների թիվը՝ 169-ը, կընդունենք որպես 100%, և ուսանողների մասնակցությունը հարցմանը, ըստ ֆակուլտետների, կունենա հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 1):

**Գծապատկեր 1.**




## 2. ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գնահատման համար ընտրվել է ինտերվալային՝ 1-5 միավորանոց, սանդղակը:

**Հարցման արդյունքները՝ ըստ հարցերի հերթականության**

***Հարց 1-ին.** Դասախոսը նյութը մատուցում է պարզ, հասկանալի, հետաքրքիր և մատչելի:*

| Հ/հ | Ֆակուլտետ, ամբիոն | 2023-2024 ուստարի առկա բաժին | 2023-2024 ուստարի հեռակա բաժին |
|---|---|---|---|
| **Հումանիտար մասնագիտությունների** | | **4,60** | **4.67** |
| **1** | Հայոց լեզվի և գրականության | 4,68 | 4,72 |
| **2** | Օտար լեզվի և գրականության | 4,57 | 4,61 |
| **3** | Իրավագիտության | 4,63 | 4,73 |
| **4** | Հասարակական գիտությունների | 4,55 | 4,62 |
| **Բնագիտատնտեսագիտական** | | **4,59** | **4.66** |
| **5** | Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների | 4,51 | 4,58 |
| **6** | Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի | 4,47 | 4,61 |
| **7** | Կառավարման և ֆինանսների | 4,69 | 4,72 |
| **8** | Հաշվապահական հաշվառման | 4,71 | 4,73 |
| ***Միջին գնահատական*** | | **4,60** | **4.66** |

Համեմատելով աղյուսակում նշված 2023-2024 ուսումնական տարվա ԳՊՀ ֆակուլտետների առկա և հեռակա բաժինները՝ կարող ենք նշել, որ և՛ Հումանիտար մասնագիտությունների, և՛ Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետների հեռակա բաժիններում նկատվում է պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի աճ՝ 0,6 միավորով:

Առաջին հարցի պատասխանների արդյունքներով ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է Հաշվապահական հաշվառման և Իրավագիտության ամբիոններում՝ 4,73 միավոր: Ամենացածր միջինացված արդյունք՝ 4,58 միավոր, ամրագրվել է Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնում:

***Հարց 2-րդ. <u>Դասախոսը լսարանում կառավարում է ժամանակը և պլանավորում դասընթացը:</u>***

| Հ/հ | Ֆակուլտետ, ամբիոն | 2023-2024 ուստարի առկա բաժին | 2023-2024 ուստարի հեռակա բաժին |
|---|---|---|---|
| **Հումանիտար մասնագիտությունների** | | **4,65** | **4,66** |
| **1** | Հայոց լեզվի և գրականության | 4,70 | 4,65 |
| **2** | Օտար լեզվի և գրականության | 4,62 | 4,59 |
| **3** | Իրավագիտության | 4,70 | 4,69 |
| **4** | Հասարակական գիտությունների | 4,61 | 4,71 |
| **Բնագիտատնտեսագիտական** | | **4,57** | **4,6** |
| **5** | Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների | 4,53 | 4,55 |
| **6** | Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի | 4,54 | 4,55 |
| **7** | Կառավարման և ֆինանսների | 4,67 | 4,71 |
| **8** | Հաշվապահական հաշվառման | 4,54 | 4,62 |
| ***Միջին գնահատական*** | | **4,61** | **4,63** |

2023-2024 ուսումնական տարվա ԳՊՀ երկու ֆակուլտետների առկա և հեռակա բաժինների համեմատության արդյունքում պարզ է դառնում, որ 2-րդ հարցի դեպքում երկու ֆակուլտետների հեռակա բաժիններում նկատվում է պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի աճ:

Երկրորդ հարցի պատասխանների արդյունքներով ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է Կառավարման և ֆինանսների ու Հասարակական գիտությունների ամբիոններում՝ 4,71 միավոր: Ամենացածր միջինացված արդյունք՝ 4,55 միավոր, գրանցվել է Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների և Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոններում:

*Հարց 3-րդ. <u>Դասախոսը դասավանդման ընթացքում կիրառում է ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդներ:</u>*

| Հ/հ | Ֆակուլտետ, ամբիոն | 2023-2024 ուստարի առկա բաժին | 2023-2024 ուստարի հեռակա բաժին |
|---|---|---|---|
| **Հումանիտար մասնագիտությունների** | | **4,49** | **4,57** |
| **1** | Հայոց լեզվի և գրականության | 4,58 | 4,61 |
| **2** | Օտար լեզվի և գրականության | 4,45 | 4,43 |
| **3** | Իրավագիտության | 4,55 | 4,64 |
| **4** | Հասարակական գիտությունների | 4,38 | 4,64 |
| **Բնագիտատնտեսագիտական** | | **4,55** | **4,55** |
| **5** | Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների | 4,47 | 4,65 |
| **6** | Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի | 4,49 | 4,51 |
| **7** | Կառավարման և ֆինանսների | 4,69 | 4,54 |
| **8** | Հաշվապահական հաշվառման | 4,58 | 4,52 |
| **Միջին գնահատական** | | **4,52** | **4,56** |

Երրորդ հարցի դեպքում ԳՊՀ հեռակա բաժիններում կրկին նկատվում է պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի աճ:

Երրորդ հարցի պատասխանների արդյունքներով ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնում՝ 4,65 միավոր: Ամենացածր միջինացված արդյունք ամրագրվել է Օտար լեզվի և գրականության ամբիոնում՝ 4,43 միավոր, նույնիսկ ավելի ցածր, քան առկա բաժնում:

Միաժամանակ, պետք է նշենք, որ վերը նշված հարցի դեպքում առկա բաժնի պատասխանների միջին գնահատականների համեմատությամբ, հեռակա բաժնում, եթե մյուս հարցերի դեպքում գրանցվել է միջին գնահատականի աճ, ապա 3-րդ հարցի դեպքում՝ Օտար լեզվի և գրականության, Կառավարման և ֆինանսների և Հաշվապահական հաշվառման ամբիոններում նկատվել է միջինացված գնահատականի նվազում:

*Հարց 4-րդ. Դասախոսը ուսանողներին հնարավորություն է փալիս իրեն դիմել լսարանից դուրս՝ դասընթացին առնչվող հարցերով:*

| Հ/հ | Ֆակուլտետ, ամբիոն | 2023-2024 ուստարի առկա բաժին | 2023-2024 ուստարի հեռակա բաժին |
|---|---|---|---|
| **Հումանիտար մասնագիտությունների** | | **4,70** | 4.71 |
| **1** | Հայոց լեզվի և գրականության | 4,81 | 4,65 |
| **2** | Օտար լեզվի և գրականության | 4,66 | 4,55 |
| **3** | Իրավագիտության | 4,72 | 4,85 |
| **4** | Հասարակական գիտությունների | 4,62 | 4,80 |
| **Բնագիտատնտեսագիտական** | | **4,69** | **4,64** |
| **5** | Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների | 4,68 | 4,62 |
| **6** | Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի | 4,59 | 4,55 |
| **7** | Կառավարման և ֆինանսների | 4,78 | 4,74 |
| **8** | Հաշվապահական հաշվառման | 4,73 | 4,65 |
| **Միջին գնահատական** | | **4,69** | **4.67** |

2023-2024 ուսումնական տարվա ԳՊՀ ֆակուլտետների առկա և հեռակա բաժինների համեմատության արդյունքում պարզ է դառնում, որ չորրորդ հարցի դեպքում հեռակա բաժիններում նկատվել է պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի նվազում:

Չորրորդ հարցի դեպքում եթե Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեպքում նկատվում է միջին գնահատականի չնչին աճ, ապա Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի մոտ գրանցվել է նվազում՝ 4.69-ից իջնելով 4,64 միավորի:

ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է Իրավագիտության ամբիոնում՝ 4,85 միավոր: Ամենացածր միջինացված արդյունքն ամրագրվել է Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի և Օտար լեզվի և գրականության ամբիոններում՝ 4,55 միավոր:

***Հարց 5-րդ. Դասախոսը խրախուսում է ուսանողների ինքնուրույն աշխատանքը, հնարավորություն է փալիս ձևավորել հետազոտական հմտություններ:***

| Հ/հ | Ֆակուլտետ, ամբիոն | 2023-2024 ուստարի առկա բաժին | 2023-2024 ուստարի հեռակա բաժին |
|---|---|---|---|
| **Հումանիտար մասնագիտությունների** | | **4,6** | **4,65** |
| **1** | Հայոց լեզվի և գրականության | 4,72 | 4,62 |
| **2** | Օտար լեզվի և գրականության | 4,53 | 4,54 |
| **3** | Իրավագիտության | 4,66 | 4,69 |
| **4** | Հասարակական գիտությունների | 4,50 | 4,75 |
| **Բնագիտատնտեսագիտական** | | **4,63** | **4,63** |
| **5** | Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների | 4,59 | 4,52 |
| **6** | Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի | 4,49 | 4,51 |
| **7** | Կառավարման և ֆինանսների | 4,73 | 4,74 |
| **8** | Հաշվապահական հաշվառման | 4,73 | 4,75 |
| ***Միջին գնահատական*** | | ***4,61*** | ***4,64*** |

Համեմատության արդյունքում պարզ է դառնում, որ հինգերորդ հարցի դեպքում հեռակա բաժիններում պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի աճ է նկատվել:

Հինգերորդ հարցի պատասխանների արդյունքներով ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է Հասարակական գիտությունների և Հաշվապահական հաշվառման ամբիոններում՝ 4,75 միավոր: Ամենացածր միջինացված գնահատական գրանցվել է Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնում:

***Հարց 6-րդ. Դասախոսը օբյեկտիվ է և ուսանողների գիտելիքները գնահատում է անկողմնակալ և թափանցիկ:***

| Հ/հ | **Ֆակուլտետ, ամբիոն** | **2023-2024 ուստարի առկա բաժին** | **2023-2024 ուստարի հեռակա բաժին** |
|---|---|---|---|
| **Հումանիտար մասնագիտությունների** | | **4,63** | **4,78** |
| **1** | Հայոց լեզվի և գրականության | 4,66 | 4,68 |
| **2** | Օտար լեզվի և գրականության | 4,65 | 4,71 |
| **3** | Իրավագիտության | 4,71 | 4,85 |
| **4** | Հասարակական գիտությունների | 4,52 | 4,88 |
| **Բնագիտատնտեսագիտական** | | **4,71** | **4,82** |
| **5** | Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների | 4,64 | 4,87 |
| **6** | Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի | 4,64 | 4,69 |
| **7** | Կառավարման և ֆինանսների | 4,76 | 4,85 |
| **8** | Հաշվապահական հաշվառման | 4,83 | 4,88 |
| ***Միջին գնահատական*** | | ***4,67*** | ***4,80*** |

Համեմատության արդյունքում պարզ է դառնում, որ վեցերորդ հարցի դեպքում հեռակա բաժիններում պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի աճ է նկատվել:

Վեցերորդ հարցի պատասխանների արդյունքներով ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է կրկին Հասարակական գիտությունների և Հաշվապահական հաշվառման ամբիոններում՝ 4,88 միավոր: Ամենացածր Հայոց լեզվի և գրականության ամբիոնում՝ 4,68 միավոր:

*Հարց 7-րդ. Դասախոսը հետևում է լսարանի արձագանքին, բարյացակամ և հարգալից է ուսանողների հանդեպ:*

| Հ/հ | Ֆակուլտետ, ամբիոն | 2023-2024 ուստարի առկա բաժին | 2023-2024 ուստարի հեռակա բաժին |
|---|---|---|---|
| **Հումանիտար մասնագիտությունների** | | **4,75** | **4,89** |
| **1** | Հայոց լեզվի և գրականության | 4,80 | 4,94 |
| **2** | Օտար լեզվի և գրականության | 4,69 | 4,88 |
| **3** | Իրավագիտության | 4,80 | 4,84 |
| **4** | Հասարակական գիտությունների | 4,74 | 4,90 |
| **Բնագիտատնտեսագիտական** | | **4,76** | **4,85** |
| **5** | Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների | 4,67 | 4,75 |
| **6** | Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի | 4,66 | 4,93 |
| **7** | Կառավարման և ֆինանսների | 4,83 | 4,86 |
| **8** | Հաշվապահական հաշվառման | 4,90 | 4,88 |
| ***Միջին գնահատական*** | | ***4,75*** | ***4,87*** |

Յոթերորդ հարցի դեպքում կրկին բոլոր ֆակուլտետների հեռակա բաժիններում նկատվում է պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի աճ:

Յոթերորդ հարցի պատասխանների արդյունքներով ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է Հայոց լեզվի և գրականության ամբիոնում՝ 4,94 միավոր: Ամենացածր՝ Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնում՝ 4,75 միավոր:

**Յոթ հարցերի միջինացված արդյունքներն՝ ըստ 2 ֆակուլտետների և 8 ամբիոնների**

| Հ/հ | Ֆակուլտետ, ամբիոն | 2023-2024 ուստարի առկա բաժին | 2023-2024 ուստարի հեռակա բաժին |
|---|---|---|---|
| **Հումանիտար մասնագիտությունների** | | **4,63** | **4,7** |
| **1** | Հայոց լեզվի և գրականության | 4,71 | 4,69 |
| **2** | Օտար լեզվի և գրականության | 4,6 | 4,61 |
| **3** | Իրավագիտության | 4,68 | 4,75 |
| **4** | Հասարակական գիտությունների | 4,56 | 4,75 |
| **Բնագիտատնտեսագիտական** | | **4,64** | **4,67** |
| **5** | Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների | 4,59 | 4,64 |
| **6** | Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի | 4,55 | 4,62 |
| **7** | Կառավարման և ֆինանսների | 4,73 | 4,73 |
| **8** | Հաշվապահական հաշվառման | 4,72 | 4,71 |
| ***Միջին գնահատական*** | | ***4,63*** | ***4,69*** |

Յոթ հարցերի պատասխանների արդյունքներով կրկին երկու ֆակուլտետների գրեթե բոլոր ամբիոններում նկատվում է պրոֆեսորադասախոսական կազմի միջին գնահատականի աճ, բացառության Հաշվապահական հաշվառման ամբիոնի, որի միջին գնահատականը նվազել է՝ 0,1 միավորով:

Յոթ հարցերի պատասխանների արդյունքներով ԳՊՀ ամբիոններից առավել բարձր միջինացված գնահատական գրանցվել է Իրավագիտության և Հասարակական գիտությունների ամբիոններում՝ 4,75 միավոր: Ամենացածր միջինացված գնահատականի գրանցվել է Օտար լեզվի և գրականության ամբիոնում՝ 4,61 միավոր:

**Ըստ յոթ հարցերի արդյունքում ամենացածր միավոր վաստակած ամբիոնները**

| Հ/հ | Հարց | Ամբիոն |
|---|---|---|
| 1 | Դասախոսը նյութը մատուցում է պարզ, հասկանալի, հետաքրքիր և մատչելի: | 1. Օտար լեզվի և գրականության<br>2. Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների |
| 2 | Դասախոսը լսարանում կառավարում է ժամանակը և պլանավորում դասընթացը: | 1. Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների<br>2. Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի |
| 3 | Դասախոսը դասավանդման ընթացքում կիրառում է ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդներ: | 1. Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի<br>2. Հաշվապահական հաշվառման |
| 4 | Դասախոսը ուսանողներին հնարավորություն է տալիս իրեն դիմել լսարանից դուրս՝ դասընթացին առնչվող հարցերով: | 1. Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի<br>2. Օտար լեզվի և գրականության |
| 5 | Դասախոսը խրախուսում է ուսանողների ինքնուրույն աշխատանքը, հնարավորություն է տալիս ձևավորել հետազոտական հմտություններ: | 1. Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի<br>2. Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների |
| 6 | Դասախոսը օբյեկտիվ է և ուսանողների գիտելիքները գնահատում է անկողմնակալ և թափանցիկ: | 1. Հայոց լեզվի և գրականության |
| 7 | Դասախոսը հետևում է լսարանի արձագանքին, բարյացակամ և հարգալից է ուսանողների հանդեպ: | 1. Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների |

***Հարց 8-րդ.** <u>Գնահատեք Ձեր բաժնի ուսումնական խորհրդատու (ների)՝ ուսանողների հետ տարվող աշխատանքը:</u>*

<table>
<tr><th>Հ/ հ</th><th>Ֆակուլտետ, ամբիոն</th><th>2023-2024 ուստարի առկա բաժին</th><th>2023-2024 ուստարի հեռակա բաժին</th></tr>
<tr><td colspan="4">Հումանիտար մասնագիտությունների</td></tr>
<tr><td>1</td><td>Հայոց լեզվի և գրականության</td><td>4,75</td><td rowspan="2">4,80</td></tr>
<tr><td>2</td><td>Օտար լեզվի և գրականության</td><td>4,31</td></tr>
<tr><td>3</td><td>Իրավագիտության</td><td>4,65</td><td>4,92</td></tr>
<tr><td>4</td><td>Հասարակական գիտությունների</td><td>4,55</td><td>4,92</td></tr>
<tr><td colspan="4">Բնագիտատնտեսագիտական</td></tr>
<tr><td>5</td><td>Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների</td><td>4,1</td><td rowspan="2">4,86</td></tr>
<tr><td>6</td><td>Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի</td><td>3,86</td></tr>
<tr><td>7</td><td>Կառավարման և ֆինանսների</td><td>4,29</td><td rowspan="2">4,89</td></tr>
<tr><td>8</td><td>Հաշվապահական հաշվառման</td><td>3,5</td></tr>
</table>

**9. Ձեր կարծիքը և առաջարկները**
**(Խնդրում ենք նշել գործոնները, որոնք, ըստ Ձեզ, կնպաստեն ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը):**

**I. Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետ**

1. Կցանկանայի, որ համալսարանում պարբերաբար փոփոխվեր մասնագիտությունների ցանկը, որպեսզի դիմորդները ընտրության լայն հնարավորություն ունենային:
2. Դասացուցակը կազմելիս ուշադրություն դարձնել ուսումնական գործընթացի արդյունավետությանը:
3. Բոլոր դասախոսների նյութերը, հարցաշարերը խնդրում ենք տեղադրել կայքում:
4. Բարելավել ԳՊՀ կայքի աշխատանքը, հանել միջանկյալ քննությունը և կրճատել քննությունների քանակը:

5. Վերանորոգել 4-րդ հարկի լսարանները, փոխել կահույքը, ուշադրություն դարձնել ջեռուցմանը:
6. Համալսարանում անծանոթ տղաների ներկայությունը խանգարում է դասապրոցեսին:
7. Մեկ օրում նույն դասախոսի մոտ մի քանի դասաժամ ունենալը սխալ է:
8. Դասացուցակում բացառել մեկ օրում կրկնվող առարկաները:

## II. Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ

1. Ոչ մասնագիտական առարկաների ինքնուրույն աշխատանքները խնդրում եմ հանել:
2. Համակարգչային լսարանների քանակը ավելացնել:
3. Կարևորել մասնագիտական գրականության ցանկը:
4. «Smart» գրատախտակների կարիք է խիստ զգացվում, հին գրատախտակները գրելու համար պիտանի չեն:
5. Դասացուցակը այնպես լինի, որ ծանրաբեռնվածությունը հավասարաչափ լինի:
6. Միջանկյալ քննությունը դարձնել բանավոր:
7. Մեր դասասենյակներում վարդակներ չկան, ինչը դժվարացնում է համակարգչով աշխատանքը:
8. Կցանկանայի, որ պրակտիկան անցկացվի 5-րդ կուրսի 1-ին կիսամյակից:
9. Վերանորոգել ՀՄՖ մասնաշենքը:
10. Գրադարանը համալրել նոր գրքերով:
11. Ավանդական դասախոսության մեթոդը փոխել ժամանակակից մեթոդով:

## IV. Եզրակացություններ, առաջարկություններ

Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցման և առկա և հեռակա բաժինների գնահատականների համեմատության արդյունքները ցույց են տալիս, որ 2023-2024 ուսումնական տարում հեռակա բաժնում գրանցվել է դասախոսների ընդհանուր միջինացված գնահատականի աճ՝ 0,6 միավորով: Ըստ ամբիոնների ամենաբարձր միավոր գրանցվել է Իրավագիտության և Հասարակական գիտությունների ամբիոններում՝ 4,75 միավոր: Ամենացածր միջինացված գնահատականի գրանցվել է Օտար լեզվի և գրականության ամբիոնում՝ 4,61 միավոր:

Հարցման արդյունքները երկու ֆակուլտետների դեկանատների, համապատասխան ամբիոնի վարիչների, Ակադեմիական քաղաքականության բաժնի կողմից քննարկման և ուսումնասիրման կարիք ունեն: Հարցման արդյունքներին կարելի է կրկին անդրադառնալ ԳՊՀ-ում անցկացվող ընդհանուր դասալսումներից հետո, երբ կամփոփվեն դասախոսների գնահատականները:

Գավառի պետական համալսարանում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման վերլուծության արդյունքները, եզրակացություններն ու առաջարկությունները հղվել են ԳՊՀ բոլոր ստորաբաժանումներին, որպեսզի ուսումնասիրվեն, ներկայացվեն համապատասխան լուծումներ ու առաջարկություններ, արդյունքում ձեռնարկվեն միջոցներ՝ ԳՊՀ հիմնական շահառուների՝ ուսանողների, բավարարվածության աստիճանը բարձրացնելու ուղղությամբ: